քննեն, փարձեալ ոչ՝ Կոնսիստորիայն և ոչ Վիճակաւորն ուշադրութիւն չեն դարձներ պակասորդ գրամի վերայ և չեն ևս պահանջեր (ինչպէս Կաթուղիկէ Եկեղեցւոյ ժողովուրդն քանի մի անգամ գրաւոր խնդրագիրներ տուեց, բայց մնացին առանց ուշադրութեան զանցառնելով և պատ ի պատ պատճառներ յառաջ բերելով. յորմէ քառասուն հազար մանէթ* անպտուղ ի պատճառս մահուան Երեցփոխանին) և մանաւանդ Նոր ընտրեալ Երեցփոխանէն կամ նորա կողմնակիցներէն զանազան զրպարտութիւններ կամ յանդիմանութիւններ կլսեն և ինքեանք՝ այս ինքն հաշուատեսք էլ իւրեանց քաշկէն վարձ չեն հատուցանել օրինապէտի դատ վարել և օրինօք պահանջել նախորդ երեցփոխանէն են պակասորդ գումարն, և մանաւանդ չունին իրաւունք առանց Կոնսիստորիային դատ վարել՝ որ երբէք չի ներում այսպիսի եղանակաւ դրամ պահանջել. իսկ Նոր Երեցփոխանն ևս քաջ գիտելով, որ զինի երկուց կամ երից ամաց ինքն ևս կենթարկուի այնպիսի դատապարտութեան, ուստի կպատասխանէ (եթէ գիտէն առ նա) թէ ես Երեցփոխան եմ ընտրուած և ոչ վէճ վարող կամ փաստաբան. Բայց եթէ հաշուատեսները թափառականներէն են, նոքա ամենայն օր մի պատրուակ բերելով, գործն կյապաղեն և նոյնպէս հաշիւներն կ՚մնայ առանց քննութեան և կամ շնորհքի համար առանց քննութեան կստորագրեն հաշիւների ուղիղ լինելոյն, ինչպէս և շատ անգամ պատահած է. Այսպէս հաշիւներն կմնան երեսի վերայ և կհնանան և վիճակաւոր Եպիսկոպոսն կամ Կոնսիստորիայն էլ հոգաբարձու չեն լինիր այնմ. Արժեմ բաւականին հասկանալի եղաւ ընթերցողին այս տխուր անցքերի հետևանքն.

(ի յետոյ)

(*) Այս գումարը ստուգութեան եւ բացատրութեան կկարօտի։

Ս. Խ.

ՍՈՒՐՀԱՆԴԱԿՔ ԲՈՒԶԱՆԴԵԱՆ

ԺԶ-րդ ՏԱՐԵԴԱՐՁ
ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ
ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈՅ

Ազգային Սահմանադրութեան ԺԶ-րդ տարեդարձի հանդէսը կատարուեցաւ կիրակի օր (Մարտի 30) ամենայն փառաւորութեամբ Հիւանդանոցի գիւղացի պարտէզին մէջ, ուր ներկայ կը գտնուէին տասը հազարի չափ ամեն կարգէ և դասէ ազգայիններ, որոց կէսը տիկնայք էին և օտարազգիք՝ ինչպէս են տաճիկ խմբագիրք և եւրոպացիք.

Կիրակի առաւօտ Հիւանդանոցի մատրան մէջ Ս. Պատարագ մատոյց Գեր. Կարապետ Եպիսկոպոս Սերովբեան, որ ազգային միութեան վրայ քարոզ մը խօսելով, Ազգին և Սուլթանին համար բարեմաղթութիւններ ըրաւ.

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը արդէն շաբաթ իրիկուընէ Հիւանդանոց իջած էր Սահմանադրութեան տարեդարձի հանդէսը իւր պատկառելի ներկայութեամբը պատուելու և նոյն հանդէսին պաշտօնական դիրք մը տալու համար.

Հանդիսադիր մասնաժողով հանդէսին զեղեցկութեան և հանդիսականաց հանգստեան համար պարտէզին մէջ յատուկ վրաններ շինած և ամեն տեսակ կարելի եղած նախապատրաստութիւնք հոգացած էր. Ժամը 5ին ատենները Ս. Պատրիարք Հայրը Հիւանդանոցի յարկէն իջնելով, նուագածուաց երկու խումբի և դրօշակակիրներու առաջնորդութեամբ հանդիսավայրը մտաւ, ուր անհամար ժողովրդեան կողմանէ կեցցէի աղաղակներով ընդունուեցաւ. Այս միջոցին ճոխ և շքեղ սեղան մը պատրաստուած էր իբր 200 հոգւոյ համար, որուն նախագահեց Ս. Պատրիարք Հայրը իր շուրջը բոլորելով իւր Փոխանորդը և քանի մը եկեղեցականներ. Սեղանին վրայ ջերմ բարեմաղթութիւններ եղան վեհ. Սուլթանին, ամենայն Հայոց Հայրապետին և Ս. Պատրիարք Հօր կենաց համար և բաժակներ

պարպուեցան։ Նոյնպէս Ազգին բարօրութեանը և Ազգ. Սահմանադրութեան յարատև արդիւնաւորութեանը համար բարեմաղթութիւն ըլլալով՝ բաժակներ առաջարկուեցան։ Ս. Պատրիարք Հօր խիստ համառօտ բայց ազդու ատենախօսութենէն վերջը ուրիշ ատենաբանութիւններ ալ եղան սեղանին վրայ, Քախուբէհեանի Աբրահամ էֆէնտիի, Նորագրոյ խմբագիր Օգսէն էֆէնտիի և այլոց կողմանէ։

Այս սեղանը միւսանգամ ևս կրկնուեցաւ՝ և այս անգամ՝ բազմականաց թիւը 200ը կանցնէր։ Սեղանին վերջը ատենախօսութիւնք շարունակուեցան և հանդիսականաց զուարճութեանը համար պարերգութիւնք տեղի ունեցան ամենայն կանոնաւորութեամբ։

Ժամը 8ին միջոցները Ս. Պատրիարք Հայրը մեկնելու կամք յայտնելով, Նուագածուաց խմբին առաջնորդութեամբ Հիւանդանոցին մօտիկ երկաթուղւոյ ճամբուն վրայ եկաւ. այս միջոցին Ս. Պատրիարք Հօր համար որոշեալ կառախումբը գալով, Ն. Սրբազնութիւնը իրեն համար պատրաստեալ վակօնը մտաւ և ժողովուրդն օրհնելով մեկնեցաւ, իր հետ տանելով ժողովրդեան ցնծալից աղաղակները և շնորհակալութիւնը։

Հանդէսն այսպէս շարունակեց մերթ պար, մերթ ազգային երգ և մերթ ատենախօսութիւնք լսուելով, մինչև ժամը 11ն ուր հանդիսականք խմբովին և ընկերակցութեամբ երգոց երկաթուղւոյ ճամբան հանելով, վակօնները ցրուեցան և ամենայն օրինաւորութեամբ և բարեկարգութեամբ իրենց տեղերը վերադարձան։

Հայրենիք Թ. 299.

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀՍՑՈՑ

ԹՈՒՐՔԻՈՅ

ՑԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ.

Ազգային ժողովը ուրբաթ օր (Յունիս 4) Նիստ ըրաւ ի Ղալաթիա ընդ Նախագահութեամբ ամեն. Ս. Պատրիարք Հօր և ատենապետութեամբ Արսլանեան վսեմ. Ստեփան փաշայի։

Ժողովը Քաղ. Ժողովոյ ընտրութեան ձեռնարկելով, դիւանաց պատրաստած ցանկէն 14 հոգի ընտրեց քուէից բացարձակ առաւելութեամբ։

1. Ապրօ Սահակ էֆէնտի
2. Նորատունկեան Յակոբ »
3. Նուրեան Յովհաննէս »
4. Կիւրպէնկեան Սերովբէ »
5. Էսայեան Յովհաննէս »
6. Մագսուտեան Սեպուհ »
7. Սագսեան Ալիքսան »
8. Ազնաւուրեան Յովհաննէս »
9. Քազազեան Յակոբ »
10. Հաճյազ Կարապետ »
11. Մարկոսեան Գրիգոր »
12. Պօյաճեան Յովհաննէս »
13. Փրէնկեան Յակոբ »
14. Կրճիկեան Անդրանիկ պէյ

Ասկէ վերջը Ս. Պատրիարք Հօր մնացած քանի մը առաջարկութիւնները աղմկալից վիճաբանութեան մը նիւթ ըլլալէ վերջը, ստորագրութեամբ վարչութեան յղուեցան, որպէս զի եկեղեցականաց մասին ծրագիր մը շինելով Ազգային ժողովո մատուցանէ ի վաւերացումն։

Նոյնպէս գաւառները գտնուած հակասահմանադրական չօրդ—ծէնները ի հնազանդութիւն բերելու և եթէ հարկ ըլլայ՝ Բ. Դրան միջոցաւ պատժելու հրահանգ տրուեցաւ Ազգ վարչութեան, միանգամայն և ազգային իշխանութեան դէմ ըմբոստ գտնուող ամեն անհատ ընտրողութեան և ընտրելութեան իրաւունքէն զրկելու հրաման եղաւ վարչութեան։

Ի վերջոյ Այվազեան Մատթէոս էֆէնտիի պատճառաբանեալ հրաժարագիրը, որով Մասիս խմբագիր Ութիւճեան Կարապետ էֆէնտիի դէմ կը բողոքէր, Ազգ. վարչութեան յղուեցաւ ի քննութիւն։

Հայրենիք Թ. 300.

Հետեւեալ Նիստում եւս վարչութեան Կրօնական ժողովոյ ընտրութիւնը կատարուած է ինչպէս կտեսնուի 1 ---- ԻԴ-րդ թիւէն: